

մահկանացուներ, որոնց, երբ լաւ մօտից զննեցինք, տեսանք որ աւելի դեների էին նմանում քան դրախտաբնակներին:

Մի գիտուն մարդ, կար, որը օպերայում միշտ գալիս էր Միրզա Ֆիրուզի մօտ և շատ բարձր գովասանքներով էր խօսում Ֆրանկ երգիչների գեղեցիկ ձայների մասին: Մենք ձանձրացանք այնքան բաներ շարունակ լսելով Քաթլանիի և Տրիմզանիի մասին. կարծես թէ աշխարհում հէնց դրանք կային միայն, և կարծես թէ մենք չէինք կարող պարծենալ մեր երգիչներով ու երաժիշտներով...

Վերջապէս մի գիշեր, երբ դեսպանը սաստիկ ձանձրացել էր այդ գովասանքները կրկին և կրկին անգամ լսելուց, ասաց գովապանող Ֆրանկին.

— Դժուր, պարոն, որքան կամենում էք կարող էք խօսել ձեր Քաթլանիների և Տրիմզանիների մասին. բայց գուցէ դուք չէք լսել մեր Բարբուտի մասին. նա, մեր Բարբուտը, իսկական երգիչ էր. հրգիչ էր նա՝ երգիչ:

Դեսպանը շարունակեց յաճախել այս տեղը (Թատրոն) մինչև մի գիշեր, երբնա տեսաւ որ փորձ էր արուել ներկայացնել մեր երկրացիներին—մի ներկայացում, որ իր կարծիքով վերաւորական էր իրեն: Նա հաւաստիացրեց մեզ, որ ոչ միայն Տիեզերքի Ապաւէնին էին պարացրել, և նրա ամբողջ հարեմը դուրս բերել նոյն բանն անելու, այլ և նրանք յանգնել էին, ինչպէս իրանք էին ասել՝ մի pas de deux սարքել մեր օրինեալ Մարգարէի և Ֆրանկների Թագուհիներից մէկի միջև:

Այս ներկայցումից յետոյ, դեսպանն այլևս չյաճախեց այդ Թատրոնը. նա երբեմն դնում էր ուրիշ Թատրոններ—Թատրոններ՝ որոնք իրանց շքեղութեամբ և փառաւորութեամբ գերազանց էին ամեն բանից՝ որ մենք կարդացել կամ լսել էինք: Գերազանց էին նոյն իսկ Ջէմշիդի Ջէհէլ Մութունի պալատներից ինչպէս և Բահրամի եօթը դրախտներից. և դրանք անգլիացիներին գիշերային յաճախատելներն էին:

— Յանձն Ալլահի, բացականչեցինք մենք, ինչպէս երևում է՝ անգլիացիք աշխարհիս ամենածոյլ ազգն են: Մեր Նօրուզի տօնը, Իմամ Հօսէյնի մահուան տարեդարձի տօնը և մեր տարեկան տօների մի քանիսը բաւական են իրանի ժողովրդի հանգստութեան և զուարճութեան համար. սակայն այստեղ զուարճութեան վերջ չկայ, և անգլիացիների համար՝ կ'ասես ամեն մի նոր օր կադանդի օր է:

Երբ մենք արաջին անգամ ներկայացանք մի Թատրոնում, մենք լսեցինք մի պատմութիւն, որը բաւական շարժեց մեր զգացումները: Թեպէտ մենք չէինք հասկանում ինչ էր աս-

ւում, այնուամենայնիւ գործողութիւնը մեզ շատ բան հասկացրեց: Ներկայացաւ մի սպիտակահեր զառամեալ Շահ, որին իր որդիքը արտաքսեցին իր երկրից և քշեցին յուսահատութեան վնի պոռնակը:

Մենք բոլորս էլ արտասուք թափեցինք, մտածելով թէ ինչ վիճակի կարող էր հասնել մեր Շահը, որը շրջապատուած է որդիներու այդքան բազմանդամ և ոխերիմ գերդաստաններով: Մենք անձկութեամբ հետաքրքրուեցինք մէհմանդարից իմանալու թէ ինչպէս էին կարողացել մի այդպէս ծեր մարդ գտնել, որ ներկայացնէր զառամեալ թագաւորին: Բայց դեռ նա մեզ պատասխան չէր տուել, երբ մի վայելչադէմ երիտասարդ մտեցաւ մեզ՝ իր յարգանքները մատուցանելու դեսպանին: Նրան մեզ հետ ծանօթացնելիս, մեզ ասուեց որ նա հէնց այն զառամեալ թագաւորն էր, որը քիչ առաջ արտաքսուել էր իր երկրից:

Մենք հազիւ կարողացանք մեզ զսպել նրան դիպչելուց, և միաձայն բացականչեցինք. «Լա Ալլահ իլ Ալլահ»:

Մեր հիացումն կ'ասես նրան զուարճացրեց, և նա հաւաստիացրեց դեսպանին, որ նրա հաւանութիւնն ինքն ըստ ինքեան ամենամեծ գովասանքն էր, որ կարող էր տրուել իրան՝ իր կատարած դերի համար:

Վերջապէս, տեղի ունեցաւ աւելի մեծ խեղկատակութիւն՝ քան երբեքէ մեր լուծիները մտածել կամ կատարել էին: Շահ Արբասի յայտնի խեղկատակը այս տեղ խաղացողի հետ համեմատած՝ միայն մի երեխայ էր: Դեսպանի՝ ծիծաղից կծկուելն ու մեր մօրուքների տմոմբալլ, որի պատճառն էր այդ ծաղրածուի անօրինակ խաղերը, անշուշտ վերջինիս համար՝ մեծ շնորհաւորութիւն էր:

Նա՛ այդ ծաղրածուն, մի բերան ունէր, որ բացւում լայնանում էր ինչքան նա կամենում էր. ոտներ ունէր, որ շարժուելիս կ'ասես համ իրենն էր համ իր հետ խաղացողինը. նա մի մարմին ունէր, որ ռետինի պէս կարճանում, սեղմւում, երկարանում, երկուտակւում և կրկին շեւկում էր:

Միբայ Ծիրուզն իսկոյն միտք յղացաւ և մի հնարք մտածեց այդ խեղկատակին հրապուրելու և Պարսկաստան տանելու: Նա համոզուած էր որ նրա պէս մի լուծի ամենալաւ ընծան կը լիներ, որ ինքը կարող կը լինէր իր վերադարձին մատուցանել Շահին: Նա գիտէր որ Շահին այդպիսի մի ընծայ տալով՝ իր վիճակը կ'ապահովէր, և զգուշ էր որ իր ձեռքում այդպիսի մի գործիք ունենալով՝ ինքը կարող կը լինէր որոնչացնել իր մեծ ու երգուեալ թշնամի՝ մեծ վէզրի դաւադրութիւնները: Սակայն երբ մէհմանդարը նրան յայտնեց թէ Անգլիայում յայտնի դե-

բասանները հրքան մեծ հկամուտ են վայելում՝ նրա մտածածը գլխիցը թռաւ:

Մենք ապշեցինք երբ լսեցինք որ այդ խեղկատակը աւելի մեծ ոռճիկ էր ստանում, քան մեր Շահի դահճապետը. որ զառամեալ թագաւորի դեր կատարող երիտասարդը տարեկան աւելի խոշոր գումար էր ստանում, քան մեր մեծ վէզիրը, և որ օպէրայում մեր տեսած պռաշին երգչուհին աւելի մեծ հկամուտ էր վայելում քան մեր Շահի որդիներից շատերը միասին:

— Դօրո՛ւղ, դօրո՛ւղ (սո՛ւտ է, սո՛ւտ է) ասացինք բոլորս: Բայց երբ տեսանք թէ մեր այս բառերը ինչ սոսկալի դայրոյթ պատճառեցին մէհմանդարին, ինչպէս և այն անգլիացիներին, որոնց մեր խօսքը ուղղուել էր՝ մենք շուարած մեր մատները մեր շրթունքների վրայ դրինք, և այլևս միմիանց հետ չխօսեցինք մեր տեսածների և լսածների մասին՝ մինչև մեզ մեռակ գտանք: Մենք մեր մէջ պնդեցինք որ այդքան ահագին, չլուած ծախքը, որ արւում էր այդպիսի չնչին, ունայն նպատակներով՝ միայն յիմարներից բաղկացած մի ժողովրդի գործ է և ոչ թէ այն խելացի և կշռադատ ժողովրդի՝ որի մէջ ապրում էինք մենք:

Գլ. ԼԱ.

Հաջի Բաբան եւ իր իշխանաւորն անգլիերէն են խօսում: Դեսպանը մի սխալմունք է անում եւ ընկնում է դժուարութեան մէջ:

Ես այժմ կարողանում էի միտքս բաւական լաւ հասկացնել անգլիերէն լեզուով. բայց շատ անգամ ասածներս անհասկանալի էին լինում: Շուտով ես տեսայ որ նաւում բարեկամներից սովորածս բառերից մի քանիսը բնաւ լաւ չէին. նրանք այնպիսի բառեր էին որ երբէք չէին գործածւում պալատականների շրջանում:

Միբղա Ֆիրուզն էլ վստահացաւ մեծ մասամբ անգլիերէն խօսել՝ առանց մէհմանդարի թարգմանութեանը: Նա աւելի շատ առիթներ և միջոցներ ունէր վարժուելու, և երբեմն էլ չափից աւելի վստահանալով իր վրայ՝ դժուարութիւնների մէջ էլ գցում իրան:

Մի գէպը պատահեց որ արժէ պատմել: Մի գիշեր նա, ըստ սովորութեան, ներկայացու գիշերային մի ժողովում, և հետեւաւ առաւօտը նա մեծ շտապով ինձ իր մօտ կանչելով՝ ասաց.

— Ի սէր Ալիի, իսկոյն ինձ մօտ բեր տետրը այն անգլիական բառերի, որ վերջին նաւում մենք սովորեցինք այն ֆուզուլ ¹⁾ մարդից: Ես սաստիկ անհանգիստ եմ, որովհետեւ կարծում եմ որ մի խայտառակ սխալ եմ արել, և ինձ թւում է որ այդ խաբեբայ սատանան դիտմամբ մեզ սխալ բառեր է սովորեցրել: Երդուում եմ, Վալլան, Բէլլան, Թալլան, որ եթէ ստուգեմ որ նա դիտմամբ է մեզ սխալ սովորեցրել և հետեապէս ինձ այնքան խայտառակել է որ այժմ ես պարտաւոր եմ շան կաշի քաշել երեսիս՝ Վալլան, Բէլլան ես նրա լեարդը դուրս կը բաշեմ կտոր-կտոր նրա մարմնի բոլոր ծակոտիւններից:

Ես անմիջապէս բառառետրը բերի, և նա մեծ մտահոգութեամբ աչքից անցկացրեց բոլոր բառերը, որ արտասանութեան համար՝ պարսկերէն լեզուի տառերով էին գրուած:

— Ես սխալուած չեմ, ասաց նա կէս ուրախանալով կէս վշտանալով. և եթէ սխալուած չեմ, ուրեմն այդ շուն, անիծած մարդը ծաղրել է ինձ: Փառք Ալլահին, եթէ նրան ճանկս կը դրցեմ, կայրեմ նրա հայրը. նա խայտառակել է ինձ ամբողջ աշխարհում:

— Այդ ինչպէս է, ասացի ես. դուցէ դա ձեր երեակայածի չափ վատ չէ.

— Անցեալ գիշեր, ասաց նա, ես խօսում էի մի տիկնոջ հետ, մի բարձր դիրք և համարում վայելող տիկնոջ հետ. նա օժրանքից մէկի կիւնն է և ես չափազանց մեծ ցանկութիւն ունիմ, զանազան պատճառներով, լաւ տպաւորութիւն թողնել նրա վրայ, լաւ համարում ունենալ նրա մօտ: Նա՛, այդ տիկինը շատ հետաքրքրուում էր մեր սովորութիւնների մասին. նա մասնաւորապէս շատ բաներ հարցրեց մեր կանանց ընդհանուր տեսքի, ինչպէս և մեր ընտանեկան սովորութիւնների վերաբերմամբ: «Եւ այժմ, ասացէք ինձ, ինչպէս կին է ձեր կինը, հարցրեց տիկինը»:

«— Ծատ լաւ կին է, ասացի ես անգլիերէն լեզուով:

«— Քայց նա ինչպիսի հասակ ունի, հարցրեց նա. բարձր է թէ կարճ:

«— Ծատ լաւ հասակ ունի, տիկին, մի քիչ կարճ է. սակայն մէջքը սալբի ծառի նման է, ասացի ես:

«— Ի՞նչ տեսակ աչքեր ունի:

«— Ծատ սիրճւն աչքեր, այսչափ մեծ են նրանք. ասացի ես ցուցամատովս ցոյց տալով իմ բոյթի կէսը:

«— Ի՞նչ տեսակ բերան, ի՞նչ տեսակ ատամներ:

¹⁾ Ուրիշի գործերի մէջ խառնուող, Ծ. Թ.

«Շատ սիրուն բերան, շատ գեղեցիկ ատամներ, տիկին. ատամները մորվարու ¹⁾ պէս են, պատասխանեցի ես:

«Եւ յետոյ, շարունակեց դեսպանը, ես աշխատեցի, որ-քան որ կարող էի լաւ բացատրել նրա համար՝ ան բոլոր մանրամասնութիւնները, որ նա, ինչպէս երևում էր, շատ հետաքրքիր էր իմանալ. սակայն մեր կանանց զգեստներն ինչպէս և նոյն զգեստների հետ գործածուող զանազան պարագաների մասին խօսելիս՝ ես արտասանեցի մի բանի բառեր՝ որոնք կամ շատ ծաղրալի կամ շատ բիրտ ու անվայելուչ պիտի լինէին, որովհետեւ, երբ այդ բառերն դիպան նրա ականջին, ես իսկոյն զգացի որ մի շատ զկեղտոտ բան էի ծամել: Նա բարկութիւն չարտայայտեց. նրա երեսի վրայ երևաց միայն զարմանք, ամաչելու զգացում և միևնոյն ժամանակ և՛ զուարճութիւն. ես ֆնացի շուարած, ապշած: Ամաչութիւնիցս քրտինքով ծածկուեցի. ես ուզում էի այդ րոպէին թաղուել ծովի յատակում. ես զգացի որ շանից էլ պակաս եմ—աւելի ստոր քան մի Փրանկի շուն: Իմ թշուառութիւնը փոխանակ թեթևանալու աւելի սաստկացաւ, երբ տեսայ որ տիկինը իր զարմանքի պատճառը յայտնեց իր քրոջը, այն էլ անպիտի մի ձևով որ ծայրայեղ ծիծաղ և զուարճութիւն առաջ բերեց, ու ես աւելի ու աւելի ապուշ կտրեցի: Պարզ էր որ մի քառորդ ժամից յետոյ, սենեակում գտնուող ամեն մի կին պիտի լսէր թէ ես ի՜նչ մեծ սխալ էի արել. և անկասկած այս րոպէիս քաղաքում մարդ, կին ու երեսայ չկայ որ ծաղրում չլինէր ինձ:»

—Բայց մի՞թէ դուք ունէ անպատիւ բան էք՝ արել ասելով անգլիէներէն լեզուով այն՝ ինչ պարսկերէնում սովորական ոճ կամ արտայայտութիւն է:

—Ա՛հ, ասաց դեսպանը, դու անգլիացիներին անպէս լաւ չես ճանաչում ինչպէս ես: Նրանք աւելի շատ են ծիծաղում մօրուքների վրայ, քան մենք պարսիկներս. և թէպէտ մենք բոլորովին անծանօթ ենք նրանց ձևերին, այնուամենայնիւ եթէ նրանք տեսնում են որ մէկն ամենափոքրիկ շեղումն է գործում, շատ անխղճօրէն դիտողութիւններ են անում: Անցեալ գիշեր մի երկար ընթրիքից յետոյ, ես մի քիչ ձգուեցի և սկսեցի յօրանջել, և տեսայ, որ բոլոր խումբն ապշած նայում էր ինձ: Եթէ ես զբաղուած լինէի պիղծ գազանի (խոզի) միս ուտելով՝ նրանք այդքան զարմացած ու ապշած չէին նայիլ ինձ:

1) Մարգարիտ:

Մէհմանդարը ներս եկաւ, և ինք իսկոյն նրան դիմեցինք ստուգելու դեսպանի արտասանած խօսքերի իսկական արժէքը: Երբ մենք բոլոր հանգամանքը պատմեցինք նրան, նա շատ զուարճացաւ և ասաց.

—Այդ բառերն անկասկած ան ժանտակոպիտ բառերից մի քանիսն են, որ գտնուում են մեր լեզուի մէջ. և ինձ թւում է որ դուք այդ բառերը սովորել էք նաւերում կամ լսել էք փողոցային ստոր մարդկանցից:

Դեսպանը յետոյ բացատրեց որ բոլոր յանցանքն իր պիղծ, անպիտան ուսուցչինն էր, որը նաւում ծառայելիս էր եղել որպէս նաւապետի օգնական: Բայց նա դարձեալ մտահոգ էր արդարացնելու իրեն իր սխալմունքի համար. հետեւեալ նա հարցրեց մէհմանդարին թէ արդեօք անգլիներէն լեզուի բառարան կը ճարձէր, որպէս զի հարկաւոր եղած ժամանակ ինքք բառերի նշանակութիւնն գտնէր նրա մէջ:

—Որովհետեւ, ասաց նա, եթէ իմ արտասանած բառերը կան բառգրքի մէջ, ուրեմն ես յանցաւոր չեմ:

Մէհմանդարը շատ երկար խօսեց մօդա կոշուած մի ինչ որ բանի մասին. նա ասաց իբր թէ այդ մօդան մի քանի բառերի գործածութիւնը պատշաճ ու վայելուչ է դարձնում, և մի քանիսինն էլ հակառակը:

Նա յետոյ ասաց, «Ես կը նայեմ մեր ամենալաւ բառարանի մէջ», և իսկոյն նա գնաց և իր գրքերի միջից հանելով բերեց մէկը, որի հեղինակը մի ինչ որ Զոհսըն անունով մէկն էր: Այդ գիրքը, ինչպէս երևաց, անգլիացիների ղամուսն ¹⁾ էր:

Բառարանը բաց անելով, գտնուեցան դեսպանի գործածած վատ բառերը: Նա անչափ ուրախացաւ, և նրա վախը բաւական փարատուեց: Նա մեծ ցաւակցութիւն յայտնեց ինքն իրան արդարացնելու համար՝ ուղեց ուղարկել մի նամակ իր բարեկամ խանմին և բացատրութիւն տալ. սակայն մէհմանդարը հաւատացրեց նրան ասելով.

—Մի գրեցէք այդպիսի նամակ, որովհետեւ խանումը բաւական խելք ունի հասկանալու. որ ձեր գործած յանցանքը յակամայից է եղել: Այդպիսի մի նամակ, աւելացրեց նա, կը

1) Մի յայտնի արաբական բառարան, որ ղամուսն է կոչուում նրա համար որ, ինչպէս ասուում է, դրա բառերն հաւաքել և կրճատել են մի ուրիշ 65 հատորեան բառարանից:

հարկադրի խանութն պատասխան գրելու ձեզ, մինչդեռ նա, հաւանականաբար, ցանկանում է որ ինքը այդ հանգամանքից բոլորովին անտեղեակ համարուի...

— Զարմանալի բաներ եմ լսում, ասաց դեսպանը. մենք պարսիկներս, այո մենք՝ որ մեր երկրում առանձին հոգ ենք տանում մեր խօսքերը ծածկել վայելչութեան քօղով՝ այդքան յղկուած չենք:

— Ա՛հ, ասաց մէհմանդարը. ոչ մի տեղում այնքան նրբութիւն և մաքրութիւն չկայ խօսքի և վարքի մէջ՝ որքան Անգլիայում կայ և պահանջում է ազնուականների շրջաններում: Ամեն օր մարդիկ աշխատում, խելք են բանեցնում նոր բառեր գիւտ անելու և գործածելու այն բառերի տեղ, որոնք ոչ շատ երկար ժամանակ առաջ գործ էին ածւում, որպէս բոլորովին արտօնեալ և գործածական բառեր:

— Եւ, յանձն Մարգարէի, ասաց դեսպանը, թոյլ տուէք ինձ հարցնել (քանի որ այդքան բծախնդիր էք) թէ ձեր մէջ «կին» բառը ուղղակի չգործածելու կամ փոխարեւրական մտքով գործածելու համար՝ ինչ բառ ունիք:

— Մենք ոչ մի ուրիշ բառ չենք գործ ածում «կին» բառի տեղ. ոչ մի անհամեստութիւն կամ անվայելչութիւն չկայ «կին» բառը գործածելու մէջ:

Ահա, տեսէք, նկատեց Միրզա Ֆիրուզը, տեսէք որ մեր և ձեր զգացումները բոլորովին տարբեր են: Մենք այդ բառի գործածութիւնը անվայելուչ և անպատշաճ ենք համարում: Մեր մէջ ոչ ոք չէ համարձակւում ուրիշին հարցնել թէ «կինդ» ինչպէս է: Աչքիս լոյս, դուք չէք տեսնում որ հազար ու մէկ անպատշաճ մեկնութիւններ կարելի է տալ այդ բառին: Կրկնում եմ, փոխանակ հարցնելու թէ ձեր «կինն» ինչպէս է, մենք հարցնում ենք ձեր «տունն» ինչպէս է: Փոխանակ ձեզ պէս կոպտաբար, պարզ ու համարձակ կերպով հարցնելու թէ ձեր «կինն» ինչպէս է, մենք հարցնում ենք—այն էլ միշտ մի աստիճան խորհրդաւորութեամբ՝ թէ ձեր «տունն» ինչպէս է:

— Այդ ձևը, ասաց մէհմանդարը կարող է յարմար դատուել այն դէպքում՝ երբ մենք ուզում ենք նշանակել մի խուժը կանայք. սակայն այստեղ, քանի որ մենք իւրաքանչիւրս միայն մէկ կին ենք պահում, այդ արտայայտութիւնը բոլորովին անտեղի և անպէտք է:

— Հիմա լսեցէք, մի ուրիշ բան էլ ասեմ, ասաց դեսպանը: Դուք խոստովանուեցիք, որ ոչ մի բան չկայ աւելի պատշաճ, աւելի համեստ ու նուրբ քան մեր «Բիսմիլլահ» բառը, որ մենք կրկնում ենք ամեն մի գործ սկսելիս: Գա կարծես թէ սրբա-

գործում և աշողացնում է մեր անելիքը, եթէ մեր հայրենակիցները իմանան որ դուք այդ բառը չէք գործածում, նրանք ձեզ կը դնեն քիւրդերի շարքը, որոնց նրանք շէյթանը քաղէ¹⁾ են անուանում. որովհետեւ նրանք ամենեւին չեն արտասանում «Բիս-միլլահ» բառը, մանաւանդ որոշ դէպքերում՝ երբ ամեն մի բառի մուսուլման պարտաւոր է անպատճառ արտասանելու:

— Այդպիսի լուրջ բնաւորութիւն ունեցող բացականչութիւնները, ասաց մէհմանդարը, բոլորովին կորցնում են իրանց արժէքը և անտեղի ու անպատշաճ են համարւում, երբ ամեն տեղ և ամեն դէպքում գործ են ածւում: Օրինակի համար, որքան անտեղի է այն բացականչութիւնը, որ թէհրանում վարունգ ծախողները սովորաբար անում են պոռալով՝ «այ խիւր, այ խիւր, յանուն օրհնեալ իմամի, այ խիւրը»:

— Եւ միթէ՞ աւելի սխալ և անտեղի բան կայ, պատասխանեց դեսպանը մեծ ոգևորութեամբ, քան այն՝ որ դուք ամեն մի բանի համար մի ընդհանրական անէծք էք արտասանում: Ձեր նաւերում ամեն բան կամ dam good կամ dam bad է. կամ dam fine ship կամ dam bad ship է: Դուք մի տիկնոջ dam pretty lady էք ասում, և մի ուրիշին dam ugly fellow

Դեսպանի այս նկատողութեան՝ մէհմանդարը ոչինչ չկարողացաւ պատասխանել:

Խօսակցութիւնը վերջանալով, Միրզա Ֆիրուզը վճռեց իսկոյն մի ուսուցիչ վարձել՝ անգլիերէն լեզուն լաւ սովորելու համար: «Այո, պէտք է լաւ սովորել, ասաց նա, պէտք է լաւ սովորել, որ մի գուցէ մենք ուրիշ սխալներ էլ անենք և մեր ետեկից վատ անուն թողնենք»:

Ես էլ, համաձայն Շահի հրամանին, տաք սրտով սկսեցի ուսումնասիրել անգլիերէն լեզուն, որպէսզի կարողանայի ժամանակով թարգմանել այդ լեզուով գրուած բոլոր գրքերը:

Մեր ուշադրութիւնը, միևնոյն միջոցին, դարձաւ մի ուրիշ եւրոպական բարբառի վրայ, որովհետեւ մեր բարեկամ այն խանը, որը կարծում էր թէ մենք արեւադաշտներ ենք, յաճախ մեզանից հարցնում էր թէ արդեօք այդ բարբառը մեր զպրոցներում աւանդւում էր թէ չէ: Լատիներէն էր նշանակում նա:

— Լատիներէն, բացականչեց դեսպանը. մենք ի՞նչ գործ ունենք լատիներէնի հետ. մենք դեռ այդպիսի լեզուի մասին երբեք չենք լսել:

Մեր բոլոր դժբաղանքներում և համալսարաններում սովորա-

1) Սատանի դաւակ, դէի ձագ: Մ. Թ.

ցնում են այդ լեզուն, ասաց խանը: Առանց լատիններէն իմանալու ոչ ոք չէ կարող աշխարհում առաջադիմել:

—Մեր թագաւորութիւնը Ջէմշեդի և Նուշիրվանի օրերից շարունակուել է և պահպանել է իր գոյթիւնը առանց լատինագիտութեան, ասաց Միրզա Ֆիրուզը: Մեր Ֆաթ Ալի Շահը, արդէն մեծ թագաւոր է և լատիններէն չգիտէ: Մենք յոյս ունինք որ առանց լատիններէնի կարող կը լինենք այրել ռումաների հայրերը, և այդ բանից յետոյ՝ լատիններէնը էլ մեր ինչլին է պէտք:

—Եթէ դուք լատիններէն չգիտէք, ասաց խանը զուարճութեամբ, գուցէ ֆրանսերէն կամ իտալերէն գիտէք. որովհետեւ դրանք ընդհանրական լեզուներ են:

—Ո՛չ, ասաց դեսպանը, մենք ոչ ֆրանսերէն գիտենք և ոչ էլ իտալերէն և ես կարծում եմ, աւելացրեց նա ժպտալով, որ ձեր վսեմափայլութիւնը գիտէ և՛ տաճկերէն և՛ արաբերէն:

—Ո՛չ, ասաց խանը, պարլամենտում այդ երկու լեզուներից՝ ոչ մի խօսք չի ասուում, հետեաբար ոչ ոք չէ սովորում: Ինչ ժամանակ որ դուք Պարսկաստանում Համայնքների Տուն կ'ունենանք, դուք կ'պարտաւորուէք լատիններէն լեզուն սովորել:

—Այո, ասաց Միրզա Ֆիրուզը ամաչելով, այո, թող այդպէս լինի. մենք ուրմն կը սպասենք մինչև այդ ժամանակը:

Այս խօսակցութիւնից յետոյ, մենք այլևս երբեք խաբին ուրիշ պնունով չկոչեցինք, այլ մկրտեցինք նրան. Լատինզու (լատինախօս) անունով:

ԴԼ. ԼԲ.

Անգլիացի կտնայր այցելում են դեսպանին:—Նա՞ դեսպանը նամակներ է ստանում Պարսկաստանից:—Նա ընկնում է անակնկալ դժուարութեան մէջ:

Մի բանի ամիսներ էին անցել այն օրից՝ ինչ մենք Անգլիա էինք հասել. և մենք արդէն սկսել էինք կամաց-կամաց գործադրել անհաւատների սովորութիւններից մի քանիսը: Ինչ ժամանակ որ մենք երկուսով դուրս էինք գնում, փոխանակ միմիանց ձեռք ըննելու, ինչպէս անում էինք Պարսկաստանում, քայլում էինք թեւացով: Մենք փոյթ չունէինք եթէ երբեմն էլ մի որեւէ կնոջ հետ նոյն դիրքով՝ այսինքն թեւացուի գնալիս տեսնում էինք:

Դեսպանի ֆէրաշը, սափրիչը և ձիապանները յաճախ

տեսնուում էին փողոցում՝ խօսելով քայլելիս մեր տանը պատկանող աղջիկներն հետ։ Մենք թողել էինք մատներով բան ուտելու սովորութիւնը։ մենք գարեջուր էինք խմում այնպէս՝ ինչպէս երիտասարդները։ Շատ նեղանում էինք եթէ երբեմն մի կէս ժամ նստում էինք դետնի վրայ՝ մեր ծնկները ծալուած մեր տակում՝ ինչպէս անում էինք Պարսկաստանում։ Միակ մարդը, որ մեր մէջ պինդ պահում ու պահպանում էր մեր սովորութիւնները, և միշտ յորդորում էր մեզ իր օրինակին հետեւել՝ Մոհամէդ Բէգն էր։

Միրզա Ֆիրուզն ինքն այնքան սիրելի և համակրելի էր դարձել տեղացիներին մօտ, որ մեր տունը շարունակ լի էր նրանցով։ Կանայքը մասնաւորապէս գալիս էին բազմութեամբ, երբեմն իրանց ամուսինների և եղբայրների ընկերակցութեամբ, և երբեմն էլ առանձնապէս իրանք։ երբեմն էլ գալիս էին երկուսով, և երբեմն էլ բոլորովին մենակ։

Նրանք գալիս էին մեր տունը, առանց վախենալու կամ քաշուելու։ Շատերն էլ, որոնք ամենեւին ծանօթ չէին դեսպանին, բաւական էին համարում չէրքէզուհուն հարցնել և այդ պատրուակով բարձրանում էին աստիճանները և մտնում էին վերնաշարիւր։ Կ'սես թէ թատրոնի դահլիճ էին մտնում։ Նրանք իրանց թոյլ էին տալիս շատ ազատ վարուել մեզ հետ. այդքան ազատ նրանք անշուշտ չէին կարող վարուել իրանց հայրենակիցների հետ։ Նրանց՝ մեզ հետ այդքան ազատ և համարձակ վարուելու պատճառն անկասկած այն էր, որ մեզ սարերից եկած անասունների տեղ էին դնում և նայում էին մեզ վրայ որպէս վայրենի գազանների։

Ինչևէ, Միրզա Ֆիրուզը, որ այնքան սրատես էր, թոյլ չտուեց որ այդ այցելութիւնները իրան համար ապարդիւն անցնէին. նա բարեկամացաւ նշանաւոր գեղեցկուհիներից շատերին հետ։ Պարսկաստանից նա իր հետ բերել էր մեծ քանակութեամբ շալեր և ուրիշ թանկագին բաներ՝ հէնց ընծաներ տալու նպատակով. և ինչքան նրա բարեկամների թիւը մեծանում էր՝ այդ ընծայացուների քանակը պակասում էր։

Նա քննադատում էր իր բարեկամ գեղեցկուհիների աչքերի փայլը, դէմքերի գոյնը, ուսների փոքրութիւնը, մէջքի նեղութիւնը, շունչերի անուշութիւնը, և նա անում էր այդ այնքան ճարպիկութեամբ՝ ինչպէս անում են անգլիացիները ամենափորձառու զաշանգները (exquisites)։

Նա խոստովանուեց որ ինքը իսկապէս սիրահարուել էր այն առաջին գեղեցկուհու վրայ, որը գրաւել էր իր ուշադրութիւնը և հիացումն էր պատճառել իրան, բայց ասաց որ իր

սիրտը մնում էր այն վերջին դեղեցկուհու ձեռքում, որի աչքերի փայլը շաղկեր էր իր աչքերը: Իր ասելով, դեռ պանը շրջապատուած անգլիացի դեղեցկուհիներով՝ անց էր կացնում մի կեանք՝ որպիսին կը շարժէր դրախտում երանութիւն վայելող հաւատացեալի նախանձը. մի խօսքով նա միշտ ոգևորուած էր, միշտ աշխոյժ, առողջ և երջանիկ էր:

Սակայն ինչպէս մեր շէյխն իմաստութեամբ ասել է, «Բնչ վարդի թուփ է կարող միշտ կանաչ լինել, կամ Բնչ կլոր հաստութիւն կայ, որ մի ժամանակ չփոխուի նիհարութեան»:

Իր այս բոլոր աջողութեան և երջանկութեան միջոցին նա՝ դեռ պանը մի առաւօտ ստացաւ նամակների մի մեծ ծրար, որն եկել էր Թագաւորաց Թագաւորի գահի ոտերի մօտից և և որը շատ խորին և լուրջ մտածութեան նիւթ դարձաւ նրա համար: Նամակները մէկը միւսի ետեից բացանելով՝ նա իր բացականչութիւններով մեզ գաղափար տուեց նրանց բովանդակութիւնների մասին:

— Ուրեմն էրդրումի այդ անանկացած, շուն փաշան բողոքել, գանդատուել է Բնձ դէմ, ասաց նա բարձրաձայն: Նա բողոքել է ինձ դէմ պահանջելով թէ ես Բնչու եմ կտրել տուել իմ շաթիրի ականջները: Ինչպիսիք, թող ես վերադառնամ... ես նրան մի դրութեան մէջ կը ձգտեմ, որ շանը երանի տայ: Եւ այդ հին աղուէսը—աւղ Միրզա Շէֆին՝ այդ անիծեալն այս աւելթը ձեռքից չէ տուել... Նա Շահին գրգռել, զայրացրել է ինձ դէմ... այ անիծուի նա էլ, իր պապերն էլ մէկ մէկ... Թող ես մի անգամ վերադառնամ, Շահի մօտ գնամ և ինձ թոյլ տրուի լեզուս ազատ գործածել, այն ժամանակ կըտեսնենք թէ ով կը յաղթի... Իր բոլոր խորամանկութեամբ, ես նրան էլ, նրա տոհմին էլ իմ լեզուով կը յաղթեմ, կը խորտակեմ: Ա՛խ, ասաց նա, նայելով իր նամակներին, վերջապէս այստեղ մի նամակ էլ իմ տնից ¹⁾ կայ:

Նա շտապով բաց արեց մի մալֆուֆէ ²⁾, որն անշուշտ իր կնոջից պիտի լինէր: Կարգալիս՝ նա սաստիկ յուզուեց, նրա ըթի ծակերը լախացան և մաղեր, բիզ բիզ եղան: Թերևս նա կամենում էր իր զգացումները չարտայայտել, բայց նրանք սխնեան զօրեղ և սաստիկ էին որ նա չկարողացաւ իրան զրապել:

— Ա՛խ, բացականչեց նա, երանի թէ այս չերքեղուհին

²⁾ Տնից՝ նշանակում է կնոջից. ծ. թ.

²⁾ Մի փոքրիկ տոմս կամ նամակ՝ ներփակուած ուրիշ նամակում:

էլ հայրն էլ, մայրն էլ, ամբողջ ցեղն էլ ծովի տակում լինէին։ Երանի թէ ես երբէք տեսած չլինէի նրան։ Օ՛, այս ի՞նչ այրող մոխիր է թափուել գլխիս։ Ամբողջ մարդկութեան առաջ այդ չեղբեզուհուն իմ տունը բերելով՝ ես այժմ իմ ընտանիքի անդամը չեմ համարուում։ Ուրեմն աշխարհն ինձ նամարդոյ պիտի կոչի այսուհետեւ։ Բայց այս բոլորից յետոյ, չէ որ նա երբ Թէհրան վերադառնայ, մի կատարեալ անձն կը լինի և իմ խանութը կ'ունենայ մի ստրկուհի, որի նմանը ոչ մի ուրիշ խանութ չէ կարող ունենալ Պարսկաստանում։ Ա՛խ, հարեմական խօսք ու զրոյցը դառնացրել է կեանքս, սեպրել է գոյութիւնս։ Չեմ իմանում ի՞նչ ասել, ի՞նչ անել։ Այ Մահբուբ, ձայնեց նա հաւատարիմ ծառային, «մենք պիտի անմիջապէս յետ ուղարկենք չեղբեզուհուն, այո՛ պիտի յետ ուղարկենք, որպէս զի հոգիս ազատուի»։

Նա շարունակեց երկամբ խօսել իր նամակների բովանդակութիւնների մասին՝ մերթ կշտամբելով մեծ վէզրին և գովաբանելով Շահին, մերթ գանդատուելով որ իբր թէ Շահը իրան չ'է գնահատել և վատ է վարուել իրան հետ, մերթ ինքն իրան գովելով, մերթ չարանալով իր կնոջ և նրա ազգականների վրայ, մերթ ողբալով իր վիճակը և սաստիկ ցաւելով որ ինքն այժմ գտնուում էր իր հայրենիքից, իր տնից այդքան հեռու մի քաղաքում՝ անհաւատների մէջ, և մերթ կրկին չափազանց գովելով նոյն անհաւատների աղնուութիւնը, հաւատարմութիւնը, բարի հաւատը և՛ միւսնոյն ժամանակ բուռն ցանկութիւն յայտնելով որ, երանի թէ ինքը կարողանար իր ամբողջ կեանքը անհաւատների մէջ անցկացնել։

Այս բոլորը, մենք գիտէինք, բոպէական յոյզի արդիւնք էր. որովհետեւ երբ նա կրկին սկսեց լուրջ կերպով խորհել, տեսաւ որ իր ճակատագրի վճիռները անդիմադրելի և անխուսափելի էին, և որ ինքը պարտաւոր էր խոնարհուել այն հարկի առաջ՝ որն ոչ մի մարդկային ձեռք չէր կարող ի բաց դարձնել։

Օրուան գործը կամաց-կամաց սկսուելով ու տաքանալով մենք գրեթէ բոլորովին մոռացանք նամակները և ան նիւթերը որ մեր երկրում թերեւ մի ամբողջ ամսուայ մոտժութեան և խօսակցութեան առարկայ կը դառնային, այստեղ համարեա իսկոյն թուան մեր մտքից՝ շնորհիւ այն աշխոյժ, եռուն կեանքի՝ որ յատուկ է Ֆրանկների մէջ ապրող մարդուն։

Դեսպանը սկսել էր չափազանց հետաքրքրուել որոշ տըպագրուած թղթերով, որ ամեն առաւօտ ցրիչների ձեռքով բաժանուում էին քաղաքի ժողովրդի մէջ։ Համարեա երբէք չէր

պատահում մի օր, նա այդ թղթերի մէջ արձանագրուած չկար-
դար իր կեանքի և գործի բոլոր մանրամասնութիւնները:

— Այժմ թո՛ղ տեսնենք, ասաց նա. թող տեսնենք թէ այ-
սօր իմ մասին ի՞նչ ստեր կը գրեն այս երկչոտ հրատարակիչները:
Եւս վստահ եմ, որ այդ թերթերում լոյս կը տեսնեն իմ ստա-
ցած նամակներիս բոլոր բովանդակութիւնները, և անկասկած
ներանք՝ այդ ստախօս հրատարակիչները իրանց թերթերում
ինձ նախապէս կը յայտնեն որ, իբր թէ Շահը ինձ համար պատ-
րաստում է ֆալսիֆկան և սպասում է որ ես վերադառնամ
իր մօտ:

Ինչեւէ, օրը մթնելու վրայ էր՝ երբ տեղի ունեցաւ մի
հանգամանք, որը գրաւիչ ստախօսների ուշադրութիւնը թէպէտ
գրաւեց սակայն ուրիշ ոչինչ դուրս չեկաւ, բացի այն որ դեսպանը
շատ անձնական վախ ունեցաւ և թամաշաչիներն (հանդիսատես-
ները) էլ մի քիչ զուարճութիւն:

Մեր քնելու ժամանակը մօտ էր՝ երբ մենք լսեցինք մի
տարօրինակ աղմուկ և իրարանցում մեր դեսպանի դիվան-
խանէն: Իսկոյն հետեցին դրմփոցներ, աքացիների ձայ-
ներ, գոռոցներ՝ որոնք այն սարսափելի աստիճանին հասան,
որ հարեան տներից կարող էին սարսափով լսել: Աշխատելով
մտնել դահլիճը, ես հազիւ կարողացայ տեսնել Շահի ներկա-
յացուցիչն՝ որը գտնուում էր շփոթուած, խառնուած դրութեան
մէջ: Նրա գլխին ո՛չ գլխարկ կար, ոչ էլ հագին բաճկոնակ...
Ինձ տեսնելուն պէս նա աւելի խառնուեց և ուժգնութեամբ
դուռը փակեց վրաս:

Մէհմանդարն էլ որ այդ ժամանակ մեր տանն էր, շտա-
պեց, եկաւ իմանալու թէ ի՞նչ էր պատահել, Բայց տեսնելով
որ դահլիճի դուռը փակ է, ինձ հետ վերադարձաւ: Աղմուկը
շարունակեց դահլիճում և մեր երկիւղները սաստկացան:

Ի վերջոյ Մահբութը—դեսպանի գերին, մեծ սոսկումով
վազեց եկաւ մէհմանդարի մօտ և, յանուն Ալլահի խնդրեց
ներան շտապել օգնելու իրան: Եւս զնացի մէհմանդարի հետ,
երկուսով մտանք դիվանխանէն, և այստեղ առաջին բանը որ
տեսանք՝ մի լաւ հաքնուած տիկին էր, որ փռուած էր բազմո-
ցի վրայ, և մի ուրիշ կին աւելի ջահիլ՝ նրա կողքին կանգնած
լալիս էր: Մէհմանդարը հարցրեց այս արտակարգ տեսարանի
պատճառը: Տիկինը պահ մի ապշած նայեց նրա երեսին և պա-
տասխան չտուեց. միւսն էլ միայն հեկեկում էր:

Վերջը տիկինը, որ կածում էր թէ իր առջև կանգնած
մէհմանդարը դեսպանն է՝ պոռաց.

— Դուք կարծում էք ես չեմ հասկանում ձեր օյինը (խաղը)։
Ես լաւ հասկանում եմ. դուք գնացիք գերծեցիք ձեր մօրուքը,
և հիմա կամենում էք նոր կերպարանք ստանալով վախեցնել
ինձ. բայց ես չեմ գնալ այստեղից, չեմ գնալ, ոչ մի բան չէ
կարող ինձ շարժել այստեղից։

Այս խօսքերի վրայ մէհմանդարը, որ լաւ ծանօթ էր իր
երկրի վարք ու բարքի հետ, ասաց նրան որ, եթէ նա իսկոյն
և եթէ չհեռանայ՝ ինքը կը պարտաւորուի գիշերապահին կանչել
և բռնի դուրս ձգել իրան։ Տիկինը տեսնելով որ ինքն այլևս
ոչինչ չէ կարող անել՝ վեր կացաւ դուրս գնաց դահլիճից. իր
աղախինը հետեց իրան։ Եւ այսպէս վերջացաւ մի տեսարան,
որը արժանի է «Հազար և մէկ գիշեր»-ին։

Միրզա Ֆիրուզը փախել գնացել էր իր նսջարանը, և
մենք նրան երբէք չտեսանք մինչև հետեւեալ առաւօտը՝ երբ
ամենաուրախ տրամադրութեամբ պատմեց մեզ իր տարօրինակ
արկածի հետեւեալ պատմութիւնը.

«Նամակներս կարդալուց յետոյ, ես հեծայ ձիս և գնացի
պարկը (parc)։ Ճանապարհին խորապէս մտածում էի ստացածս
նամակների բովանդակութիւնների վրայ, և առանց այդ կամ
ձախ կողմս նայելու, շարունակում էի ճանապարհս՝ մինչև յան-
կարծ մի ծառայ առաջս կանգնելով և մատնացոյց անելով եր-
կու կին։ Որոնք քայլում էին, ասաց թէ «տիկինը ցանկանում
է ձեզ հետ խօսել»։ Ես յարգանքով գլուխ իջեցրի այդ երկու
կանանց մեծին, որն առանց քաջուելու կամ տատանուելու՝
շատ յարգալից խօսքեր շոյալից ինձ և ասաց որ ինքը շատ
երջանիկ կը լինէր մի երեկոյ այցելել ինձ։

«— Վնաս չկայ դրանում, ասացի ես. Բիսմիլլահ, յանուն
Ալլահի շնորհ բերեք։

«Նա շնորհակալ եղաւ, ես շարունակեցի ճանապարհս։ Այդ
րոպէին ես շատ քիչ մտածեցի այս արկածի մասին. սակայն
ես նկատեցի որ նա անգլուհի չէր. նա աւելի ասիացու մոլթ
գիմազօծեր ունէր. նա ոչ ջահիլ էր՝ ոչ էլ գեղեցիկ։

«Մեր հինաւուրց սովորութիւնը պահանջում է որ մենք
պարսիկներս մեր տան դուռը բաց թողնենք բոլոր եկողների
համար. և այդ սովորութեան համեմատ՝ ես առանց տատան-
ուելու այդ տիկնոջն ընդունեցի իմ տունը։ Նա եկաւ ընկերակ-
ցութեամբ մի երիտասարդուհու, որը, ինչքան կարողացայ ի-
մանալ՝ կամ նրա աղախինն էր կամ ընկերը։ Յամենայն դէպս,
նա նրա ստորագրեալն էր երեւում աստիճանով, բայց ոչ գեղեց-
կութեամբ. որովհետեւ նրա գեղեցկութիւնն սքանչելի էր ձիւտ
ասած, ես լաւ չէի հասկանում թէ ինչպէս պիտի վարուել այդ-

պիսի այցելուները հետո Տիկինը շատ բան խօսեց որ ես չկարողացայ ըմբռնել, բայց ես տեսայ որ նա անգլուհի չէր, այլ փոթորկալուհի:

«Մեր տեսակցութիւնը շատ սառն էր անցնում և կամաց կամաց ձանձրալի էր դառնում: Այդպիսի հանգամանքում ես վարուեցի այնպէս՝ ինչպէս կը վարուէի իմ երկրում, այսինքն ես՝ ժիրդ և գինի պատուիրեցի. սակայն ձանձրանալով ինձ այցելող տիկնոջից, սկսեցի խօսել և զբաղուել միւսի՝ ջահիլ գեղեցկուհու հետ: Ես շուտ նկատեցի որ իմ այդ ուշադրութիւնները վատ հետևանք էին ունենալու: Երիտասարդուհին սկսեց վախենալ. իսկ տիկինը՝ նախանձել: Փոթորիկը վրայ հասաւ, փոթորկալուհու դէմքը սևացաւ, անհղացաւ:

«Ես յաճախ ակնտես էի եղել մեր հարեմներում տեղի ունեցող կռիւներին, որ նախանձի հետևանքներն են. բայց երբէք չէի տեսել այդ կիրքը՝ (խանդը) իր հետևանքներով անյաստիճանին հասած՝ որին հասաւ իմ տան մէջ... Տիկինը փոթորկեց, կատաղեց, բարձրացաւ նրա աջ թևը, իջաւ նրա ձախը... Նա ընկաւ ետևիցս, ես վազեցի սենեակի շուրջը, նա ընկաւ ետևիցս, նա զարկեց ինձ, խփեց ու գրխարկս թոցրեց գլխիցս, պարեգոտս պատուտեց, ծուէն ծուէն արեց:

«Ալլահ իւ Ալլահ, այս լինչտեղ եմ ընկել», բացականչեցի ես:

«Ես շէնք, գլուխս կորցրել էի, չէի հասկանում թէ նա ինչ էր ուզում, ինչ էր պահանջում ինձանից. չէի կարողանում իմանալ թէ ինչն էր կարող նրան հանգստացնել: Ես փող առաջարկեցի նրան, նա վերցրեց և ուժգնութեամբ շարտեց սենեակում. կախուած մեծ հայելիների վրայ: Ջահիլ կինը միայն հեկեկում էր բարձրաձայն:

«Ի վերջոյ, յոգնելով այս սոսկալի դրութիւնից, ես փախայ դուրս և փակուեցի իմ ննջարանում: Մնացածը դուք գիտէք:»

— Ի սէր Ալլահի, ասաց դեսպանը, այժմ ասացէք ինձ, ո՞վ էր նա, այդ տարօրինակ կինն, ո՞վ կարող է լինել: Ինձ երևաց որ նա խանում է. նրա լաւ հագնուած ծառան, նրա ճոխ զգեստը, նրա աղախինը—բոլորը ցոյց էին տալիս որ նա հասարակ դասակարգի անձն չէ. սակայն այդպիսի հարուածներ որ նա տուեց ինձ, ճ, մօրուքս վկայ, կարծում եմ շէյթանի հենց իրա գործն է. նա շէյթանն ինքն էր:

Մէհմանդարն էլ մէզ պէս շփոթուեց. նա չէր կարողանում հասկանալ. թէ ինչ բանի վերագրել այս դէպքը: Նա զգուշաց-

րեց դեսպանին այլևս ամենևին իր տան մէջ չընդունել այնպիսի անձինք, որոնք նախապէս կանոնաւոր կերպով ծանօթացած չեն իրան: Նա նկատեց որ Լոնդոնը Սպահան չէ, ուր ամեն անհատ փոքր ի շատէ ճանաչուած է. այլ դա մի անագին ընդունարան է բոլոր նկարագրի տէր մարդկանց համար, որոնցից հարիւրաւորներն ապրում են անպատուաբեր միջոցներով: Նա աւելացրեց որ հաւանականաբար իրան այցելող անծանօթ տիկինն էլ այդպիսիներից մէկն է եղել:

Վերջապէս, նա ակնարկեց որ նա՛ այդ կինը ոչնչով աւելի կամ պակաս չէ քան մի օտար ջաֆջաֆ:

— Բայց ասաց դեսպանը, այդ թշուառական ստախոսները իսկոյն կը հրատարակեն և իմաց կը տան ամբողջ աշխարհին, որ իբր թէ ես ծեծելիս եմ եղել իմ չէրքէզուհուն, և իմ վրայ արդէն արած ստախօութիւնների վրայ կաւելացնեն այդ սուտն էլ, և աշխարհն ինձ վրայ կը նայի որպէս մի անգութ մարդի, որպէս մի հրէշի վրայ: Ապա թնչ պիտի անել: Օրհնեալ Ալին վկայ, որ չէրքէզուհուն իսկոյն կ'ուղարկեմ Թէհրան մեր տունը, և այն ժամանակ հոգիս ազատուած կը լինի:

Այսպէս վճռեց դեսպանը, և մենք հեռացանք նրա մօտից:

Գլ. ԼԳ.

Անդլիացւոց ստերի մասին:—Հաջի Բաբան ծանօթանում է մի նոր գերդաստանի հետ:—Նա նկարագրում է Հօգեան գերդաստանը:

Այս միջնադէպը շուտով մոռացուեց, և դեսպանը հետեւելով իր սեպհական հաճոյքներին, սկսեց ապրել գրեթէ բոլորովին անհաւատների շրջաններում, թողնելով ինձ՝ ինչպէս և իր բոլոր հետևորդներին՝ զբաղուել մեր մտածմունքներով ու գործերով:

Թող մարդիկ ինչ ուզում են ասեն պարսիկների սուտ խօսելու հակումների մասին, բայց մենք տեսանք որ Անգլիայում խաբէութիւնն ու ստախօսութիւնն աւելի բարձր աստիճանի էր հասած քան Պարսկաստանում: Ո՛չ մի օր համարեա չէր անցնում որ դեսպանի անունը չխնդրուէր մի մեծ սուտ ասելու համար: Օրինակ՝ մի մարդ գալիս խնդրում էր դեսպանին որ մի կառքի մտրակ ընդունէր իրենից որպէս նուէր: Նա ընդունում էր թէ չէ, այդ մարդն իսկոյն գնում և խոշոր տառերով իր խանութի ճակատին գրում էր «Պարսիկ Չահի կառք շինողը» Մի ուրիշ գէպքում Մոհամէդ բէգն և ես բայլում էինք